Շեռեան Բռնձոյի շղթային մօտենայ, այնպէս որ մի ժամ հանդէպ Խաստուրայ Ասաֆ և Աբէս գիւղերու մօտ, ուր և ս է Թուխ Մանուկ, դաշտագետինն կըսպառի, յետոյ կը դայ Շեռեանայ աջ ափին (ի հարաւ) վերայ մի ընդարձակ զառիվեր, կամ Բռնձո, Ղլիճ կետուկ և Կեառէ Շղթայի հիւսիսային կողերն։

Մենք Շեռեանայ աջ ափն բռնելով Աբաս գիւղէն 3 1/2 ժամ գնացինք, միշտ մեր աջ կողմն ունեցանք հակեալ զառիվեր մի մինչև Քօլի քրդ· գիւղն, ուստի մի դաշտագետին կսկսի ընդլայնիլ Զատոյի թև անունով Կեառէ լերան հիւսիսային և արևելեան ստորոտն, որ անկիւն մի կը կազմէ Շեռեանայ աջ ափին վերայ Մուրատի խառնուելէ անմիջապէս յետոյ ի հարաւ դառնալով, ուր և ս Մուրատի երկու ափերու վերայ կան Ցամբաղ և Զատոյ, որ յետոյ պիտի խօսիմք։

Այժմ դառնանք յետ, հանդէպ Խաստուրայ Թուխ Մանուկէն հարևանցի նկարագրելով հասնինք մինչ Զատոյի թևը։

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ

Ի հարաւոյ Խաստուր գիւղին կայ Աբաս[1] քուրդ գիւղն, որ Բռնձոյի ջրի ձախ եզրն շինուած է, որ արդէն վերև յիշած ենք և կը պատկանի Շեռեանայ գլխուն։

Խաստուրէն ի հարաւ արևմուտս ուղղուած ու անցած էինք քանի մի ջրաղացի առուներ, Շեռեանայ

---

1. Այս գիւղին Աբէս եւս կասուի։